Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ հոդվածի 6-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ա մ է**:

1.Սահմանել՝

1) սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում՝ նախնական արտադրության գործառնություններից հետո, պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝ սույն որոշման NN 1 և 2 հավելվածներով սահմանված ոլորտներում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման յուրաքանչյուր ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ հանրապետության առավելագույն տպաքանակ ունեցող մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներում հրապարակել դրա մասին տեղեկատվություն:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման ժամանակացույցը՝ ըստ արտադրության ոլորտների սահմանելու և Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի N 414 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 807-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց
ՄԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ՝
ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՊԱՏՇԱՃ
ՀԻԳԻԵՆԻԿ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ԵՎ ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՄԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

| Հ/Հ | Խումբ, դաս, ենթադաս | Տնտեսական գործունեության տեսակը (գործունեության ոլորտը) | Ներդրման ժամկետի ավարտը |
|-----|---------------------|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | 10.1 | Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն | գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2022թ. հունվարի 1-ը միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2021թ. հունվարի 1-ը այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2020թ. հունվարի 1-ը |
| | 10.2 | Ձկների, խեցեղորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում | |
| | 10.32 | Մրգահյութերի և բանջարահյութերի արտադրություն | |
| | 10.39 | Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, չներառված ուրիշ խմբավորումներում | |
| | 10.5 | Կաթնամթերքի արտադրություն | |
| | 10.86 | Համասեռված բաղադրիչներ պարունակող և սննդակարգային (դիետիկ) սննդի արտադրություն | |
| 2. | 10.71 | Հացի և թարմ այլուրե հրուշակեղենի արտադրություն | գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2024թ. հունվարի 1-ը փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը |
| | 10.72 | Պաքսիմատների, թխվածքաբլիթների, երկարատև պահման այլուրե հրուշակեղենի արտադրություն | |
| | 11.02 | Խաղողի զինու արտադրություն | |
| | 11.03 | Խնձորի և այլ պտղահատապտղային զինիների արտադրություն | միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2022թ. հունվարի 1-ը այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2021թ. հունվարի 1-ը |
| | 11.05 | Գարեջրի արտադրություն | |
| | 11.06 | Ածիկի արտադրություն | |
| | 11.07 | Ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն. հանքային և շշալցված այլ ջրերի արտադրություն | |
| 3. | 10.31 | Կարտոֆիլի մշակում և պահածոյացում | գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2025թ. հունվարի 1-ը |
| | 10.4 | Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն | |

| | | | |
|----|-----------------------------|--|--|
| | 10.6 | Այրադաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն | <p>փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2024թ. հունվարի 1-ը</p> <p>միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը</p> <p>այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2022թ. հունվարի 1-ը</p> |
| | 10.73 | Մակարոնեղենի և համանման այլուրե արտադրատեսակների արտադրություն | |
| | 10.81 | Շաքարի արտադրություն | |
| | 10.82 | Կակաոյի, շոկոլադի և շաքարե հրուշակեղենի արտադրություն | |
| | 10.83 | Սուրճի և թեյի մշակում | |
| | 10.84 | Համեմունքների արտադրություն | |
| | 10.89.2 | Խմորիչների արտադրություն | |
| | 10.89.9 | Այլ սննդամթերքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում | |
| | 11.01 | Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում | |
| | 11.04 | Խմորման նյութերից այլ չթորած խմիչքների արտադրություն | |
| 4. | 46.3 (բացառությամբ 46.35-ի) | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի մեծածախ առևտուր | <p>գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2026թ. հունվարի 1-ը</p> <p>փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2025թ. հունվարի 1-ը</p> <p>միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2024թ. հունվարի 1-ը</p> <p>այլ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր՝ մինչև 2023թ. հունվարի 1-ը</p> |
| | 47.2(բացառությամբ 47.26-ի) | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում | |
| | 47.81.3 | Սննդամթերքի մանրածախ առևտուր շուկաներում | |
| | 56.10.1 | Ռեստորանների ծառայություններ | |
| | 56.10.2 | «Արագ սննդի» կետերի ծառայություններ | |
| | 56.21 | Պատրաստի սնունդ մատակարարող կազմակերպությունների գործունեություն | |
| | 56.29.1 | Կազմակերպություններին կից ճաշարանների և խորտկարանների ծառայություններ | |
| | 56.29.9 | Հանրային սննդի կազմակերպման այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում | |
| | 56.30 | Բարերի և խմիչքների մատուցման համանման կետերի ծառայություններ | |

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ս. ԼԱԶԱՐՅԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց
ԿԵՐԵՐ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՏԱՆԳԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
(ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՆԵՐԴՐՄԱՆ

| ՀՀ | Դաս | Տնտեսական գործունեության տեսակը (արտադրության ոլորտը) | Ներդրման ժամկետի ավարտը |
|----|--|--|------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | 10.91 | Գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն | մինչև 2025թ. հունվարի 1-ը |
| | 10.92 | Տնային կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն | |
| - | Գյուղատնտեսական և տնային կենդանիների համար կերային հավելումների արտադրություն | | |

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ապրիլի 2018թ.

N 221-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ
ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 105-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև կայուն զարգացման համաշխարհային գործընթացին Արցախի Հանրապետության ակտիվ մասնակցությունն ապահովելու և դրա շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության կայուն զարգացման ազգային խորհուրդ և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Արցախի Հանրապետության կայուն զարգացման ազգային խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ձ Մ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԻ

1. ԱՀ պետական նախարար (խորհրդի նախագահ)
2. ԱՀ առողջապահության նախարար
3. ԱՀ արդարադատության նախարար
4. ԱՀ արտաքին գործերի նախարար
5. ԱՀ աշխատանքի սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար
6. ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարար
7. ԱՀ գյուղատնտեսության նախարար
8. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար
9. ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար
10. ԱՀ քաղաքաշինության նախարար
11. ԱՀ ֆինանսների նախարար
12. ԱՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ (համաձայնությամբ)
13. ԱՀ Ազգային ժողովի արտադրության և արտադրական ենթակառուցվածքների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
14. ԱՀ Ազգային ժողովի սոցիալական և առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
15. ԱՀ Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Բ Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգի նպատակը կայուն զարգացման ազգային խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) գործունեության կանոնակարգումն է:

2. Կայուն զարգացման բնագավառում ազգային զարգացման ծրագրերի և հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը և այդ գործընթացին հասարակայնության լայն շերտերի մասնակցությունն ապահովելու համար խորհուրդն իրականացնում է խորհրդակցական մարմնի գործառույթներ:

II. Խորհրդի գործառույթները

3. Խորհրդին վերապահվում են հետևյալ գործառույթները՝

1) կայուն զարգացման հայեցակարգի և ռազմավարությունների մշակմանն աջակցելը:

2) մեխանիզմներ առաջարկելը, որոնք կընդլայնեն, կմանրամասնեն և իրագործելի կդարձնեն կայուն զարգացման հիմունքները և դրանք Արցախի Հանրապետության զարգացման ծրագրերում և քաղաքականության փաստաթղթերում ընդգրկելը՝ ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում:

3) քաղաքական ու օրենսդրական բարեփոխումների, նոր ծրագրերի, գործողությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում, որոնք կնպաստեն կայուն զարգացման ներկայիս և ծագող խնդիրների կարգավորմանը և կնախանջեն կայուն զարգացմանը վերաբերող հետագա գործողությունները:

4) իր կողմից ձևավորված փորձագիտական խմբերի միջոցով համապատասխան շահագրգիռ մարմիններին ազգային նշանակություն ունեցող բնապահպանական և սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում:

5) կայուն զարգացման ոլորտի շրջանակներում, որպես համակարգող մարմին, փաստահավաք գործունեության համակարգումը:

6) անհրաժեշտության դեպքում մասնագիտական կազմակերպություններին, առանձին փորձագետների դիմելը՝ խորհրդին իր դերի ու գործողությունների կատարման հարցում աջակցելու համար:

4. Սույն աշխատակարգով նախատեսված խնդիրների իրագործման նպատակով խորհուրդը կարող է իրականացնել այլ գործառույթներ:

III. Խորհրդի նիստերը

5. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

6. Անհրաժեշտության դեպքում, խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների առնվազն կեսի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ նիստ:

7. Խորհրդի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների՝ խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող մասնագետներ,

ինչպես նաև գիտական, կրթական, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

8. Խորհրդի նիստերի մասին խորհրդի անդամներին և հանրությանը տեղեկացնում է խորհրդի քարտուղարությունը՝ նիստից առնվազն հինգ օր առաջ, իսկ օպերատիվ բնույթի, հրատապ լուծում պահանջող հարցեր քննարկելու անհրաժեշտության դեպքերում՝ մեկ աշխատանքային օր առաջ:

9. Խորհրդի նիստերն անցկացվում են Ստեփանակերտ քաղաքում: Անհրաժեշտության դեպքում, խորհրդի նախագահի որոշմամբ, խորհրդի նիստերը կարող են անցկացվել արտագնա:

10. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը: Քվորումի բացակայության դեպքում մեկ շաբաթվա ընթացքում հրավիրվում է նոր նիստ:

11. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

12. Խորհրդի նիստերն անցկացվում են խորհրդի կողմից հաստատված օրակարգով: Խորհրդի նախագահը որոշում է խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը:

13. Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը և քննարկվելիք հարցերին վերաբերող մյուս անհրաժեշտ փաստաթղթերը խորհրդի անդամներին են փոխանցվում նիստի անցկացումից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:

14. Նիստի արձանագրությանը, անհրաժեշտության դեպքում, կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, այդ թվում՝ իրավական և այլ փաստաթղթերի նախագծեր (հայեցակարգեր, ռազմավարություններ, հաշվետվություններ և այլն), գրավոր զեկույցներ, առաջարկություններ, կարծիքներ:

IV. Խորհրդի կազմը

15. Խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:

16. Խորհուրդը կարող է ձևավորել աշխատանքային և թեմատիկ խմբեր, փորձագիտական խորհուրդներ:

17. Խորհրդի անդամները՝

1) իրավունք ունեն՝ ներկայացնելու խորհրդի որոշումների նախագծեր, հայտնելու իրենց կարծիքը խորհրդում քննարկվող ցանկացած հարցի և խորհրդի գործունեության ընթացակարգի վերաբերյալ:

2) պարտավոր են՝

ա. մասնակցել խորհրդի նիստերին,

բ. անհրաժեշտության դեպքում մասնակցել աշխատանքային և թեմատիկ խմբերի նիստերին,

գ. պահպանել խորհրդի աշխատակարգի դրույթները և կատարել խորհրդի որոշումները: Հնարավորինս աջակցել խորհրդի աշխատանքներին և նպաստել դրա որոշումների կատարմանը:

V. Խորհրդի նախագահը

18. Խորհրդի նախագահն ի պաշտոնե Արցախի Հանրապետության պետական նախարարն է:

19. Խորհրդի նախագահը՝

1) համակարգում է խորհրդի գործունեությունը և ապահովում որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

2) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը:

3) համակարգում է խորհրդի քարտուղարության ընդհանուր աշխատանքները:

4) իրականացնում է սույն աշխատակարգով նախատեսված այլ գործառնություններ:

VI. Խորհրդի քարտուղարությունը

20. Խորհրդի քարտուղարության իրավասությունները վերապահվում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությանը:

21. Քարտուղարության հիմնական նպատակը խորհրդի բնականոն գործունեությունն ապահովելը, դրա նիստերի կազմակերպմանն աջակցելը, խորհրդի անդամների, թեմատիկ խմբերի ու փորձագիտական խմբերի միջև մշտական կապն ապահովելը և այլ գործառնությունների իրականացումն է:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում քրեական գործ ԸԻԴ 0023/01/16թ.
Քրեական գործ ԸԻԴ 0023/01/16թ.
Նախագահող դատավոր՝ Հ. Աբրահամյան
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան
Կ. Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 13 մարտի 2018թ.

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա. Հայրապետյանի
մասնակցությամբ՝ դատավորներ Ա. Աբրահամյանի
Վ. Հովսեփյանի
Ի. Կարապետյանի
Գ. Գրիգորյանի

քարտուղարությամբ՝ Վ. Հակոբյանի
մասնակցությամբ՝ մեղադրող Ջ. Օսիպյանի
պաշտպան Ա. Ապրեսյանի
ամբաստանյալ Ջ. Հակոբյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ մեղադրանքի Ջարդար Տելուշի Հակոբյանի ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով, քրեական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի որոշման դեմ ԱՀ գլխավոր դատախազ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ա. Մոսիսյանի և ամբաստանյալ Ջ. Հակոբյանի պաշտպան Ա. Ապրեսյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Թիվ 211019.15 քրեական գործը հարուցվել է 2015 թվականի հոկտեմբերի 2-ին ԱՀ Քաշաթաղի շրջանի դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ի. Ալավերդյանի կողմից՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով, և նույն օրը կայացված մեկ այլ որոշմամբ ուղարկվել ըստ քննչական ենթակայության՝ ԱՀ գլխավոր դատախազություն:

2015 թվականի հոկտեմբերի 6-ին թիվ 211019.15 քրեական գործն ԱՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Գ. Ամիրյանի /այսուհետ՝ Նախաքննության մարմին/ որոշմամբ ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ նշանակվել է դատատեսաձայնագրման փորձաքննություն:

Նախաքննության մարմնի 2015 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ Ջարդար Տելուշի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով:

Նախաքննության մարմնի նույն օրը կայացրած որոշմամբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմինը 2015 թվականի նոյեմբերի 30-ին որոշում է կայացրել «PRINCO» արտադրության DVD-R ֆորմատի 4,7 GB ֆորմատով լազերային սկավառակն իրեղեն ապացույց ճանաչելու մասին:

Նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի նոյեմբերի 30-ին նախաքննության ժամկետը երկարացվել է մինչև 2016 թվականի փետրվարի 2-ը:

Նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2016 թվականի հունվարի 30-ին նախաքննության ժամկետը երկարացվել է մինչև 2016 թվականի ապրիլի 2-ը:

Նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2016 թվականի մարտի 22-ին հաստատվել է մեղադրական եզրակացությունը և քրեական գործը ուղարկվել է ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/:

2016 թվականի մարտի 23-ին Դատարան մուտք գործած քրեական գործին շնորհվել է ԸԻԴ 0023/01/16 հերթական համարը:

Քրեական գործը 2016 թվականի մարտի 31-ին ընդունվել է դատավոր Վ.Հայրապետյանի վարույթ, իսկ ընտրված խափանման միջոցը թողնվել է անփոփոխ:

Դատարանի 2016 թվականի հունիսի 7-ի որոշմամբ նշանակվել է տեսաձայնագրային և հետքաբանական համալիր փորձաքննություն:

Դատարանի 2017 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ նշանակվել է տեսաձայնագրային փորձաքննություն:

Դատարանը դատական քննության արդյունքում, 2017 թվականի հոկտեմբերի 23-ին կայացված դատավճռով Ջարդար Տելուշի Հակոբյանին ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ ճանաչելով և հռչակելով նրա անմեղությունն այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարման մեջ մեղսագրված արարքում, ապացույցների անբավարարությամբ պայմանավորված հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նույն դատավճռով Ջարդար Տելուշի Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացվել է:

2017 թվականի նոյեմբերի 16-ին ԱՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ջ.Օսիպյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել ԱՀ վերաքննիչ դատարան /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել Դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռը և կայացնել մեղադրական դատավճիռ:

Վերաքննիչ դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԸԻԴ 0023/01/16թ. քրեական գործով 2017 թվականի

հոկտեմբերի 23-ի դատավճիռը բեկանվել՝ Ջարդար Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կատարելու համար և դատապարտվել ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին՝ /այսուհետ՝ նաև Համաներման ակտ/ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Ջարդար Տելուշի Հակոբյանը ազատվել է նշանակված պատժի կրումից:

Նշված որոշման դեմ 2018 թվականի հունվարի 28-ին ԱՀ գլխավոր դատախազ Ա.Մոսիսյանի և Ջ. Հակոբյանի պաշտպան Ա.Ապրեսյանի կողմից ներկայացվել են վճռաբեկ բողոքներ, որոնք Գերագույն դատարանի 2018թ. փետրվարի 19-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Վճռաբեկ բողոքների պատասխան դատավարության մասնակիցների կողմից չի ներկայացվել:

2.Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Ըստ մեղադրական եզրակացության՝ Ջարդար Տելուշի Հակոբյանը մեղադրվում է այն բանում, որ նա, հանդիսանալով Քաշաթաղի շրջանի Ղազարապատ համայնքի թիվ 27-րդ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և օժտված լինելով քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ քվեաթերթիկները վավեր կամ անվավեր հայտարարելու իրավասությամբ, նույն համայնքում 2015 թվականի սեպտեմբերի 13-ին կայացած համայնքի ղեկավարի ընտրության քվեարկությունն ավարտելուց և քվեատուփը բացելուց հետո, գրանցված երկու թեկնածուների օգտին քվեարկած ձայները հաշվելու ժամանակ, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, անձնական շահագրգռվածությունից ելնելով, համայնքի ղեկավարի թեկնածուներից մեկի՝ իր հարազատ եղբոր՝ Կարապետ Տելուշի Հակոբյանի օգտին բավարար ձայներ գրանցելու և համայնքի ղեկավար ընտրվելու նպատակով, մյուս թեկնածու՝ Տիգրան Սերգեյի Պողոսյանի օգտին քվեարկած թվով երկու հատ քվեաթերթիկներից մեկը դիտավորությամբ ձեռքով պատռել է, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալել և դրանք հայտարարել որպես անվավեր քվեաթերթիկներ: Այսուհետև, Տիգրան Սերգեյի Պողոսյանի օգտին քվեարկած թվով երկու քվեաթերթիկների հակառակ կողմում՝ հետևի մասում, հանձնաժողովի անդամների ստորագրության մոտ առկա կետերը հիմք ընդունելով, դրանք հայտարարել է որպես անվավեր և տեղադրել անվավեր քվեաթերթիկների փաթեթում, իսկ եղբոր օգտին քվեարկած թվով չորս հատ քվեաթերթիկների առաջնային մասերում քվեարկության համար նախատեսված վանդակներում առկա կետերն անտեսելով, դրանք համարել է վավեր և տեղադրել Կ. Հակոբյանի օգտին վավեր ճանաչված քվեաթերթիկների փաթեթում:

Բացի այդ, Կարապետ Տելուշի Հակոբյանի օգտին քվեարկած մեկ հատ քվեաթերթիկի վրա սահմանված ձևին չնմանվող նշման առկայության դեպքում, այն անվավեր հայտարարելու փոխարեն, տեղադրել է չօգտագործված և մարված քվեաթերթիկների փաթեթում:

Նշված գործողությունները նախաքննության մարմնի կողմից գնահատվել են որպես քվեների կեղծում և ակնհայտ սխալ հաշվում, որոնց արդյունքում

կեղծվել են համայնքի ղեկավարի ընտրության արդյունքները, դրանք գրանցվել համապատասխան արձանագրությունում և հաստատվելով ներկայացվել Քաջաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովին:

2. Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Ջարդար Հակոբյանն իրեն մեղավոր չի ճանաչել:

3. Դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, այն հիմնավորելով հետևյալ կերպ. Տիրապետության եզրակացություններով չի հաստատվել և դատական նիստում չի ապացուցվել ամբաստանյալ Ջարդար Հակոբյանի կողմից թեկնածու Տիգրան Մերգելի Պողոսյանի օգտին քվեարկած թվով երկու հատ քվեաթերթիկներից մեկը դիտավորությամբ ձեռքով պատռելու, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալելու և դրանք որպես անվավեր քվեաթերթիկներ հայտարարելու հանգամանքը: ...Ջարդար Հակոբյանի գործողությունները պատկերող լազերային սկավառակը, որի հիման վրա առավելապես կառուցված է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը, դատարանի մոտ խիստ կասկած է հարուցում, ավելին, Դատարանը գտնում է, որ դա արժանահավատ չէ...: ...Դատարանն արձանագրում է, որ հենց գործով իրեղեն ապացույց ճանաչված, ընտրության արդյունքների ամփոփման և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ գործով ամբաստանյալ Ջարդար Հակոբյանի գործողությունները պատկերող լազերային սկավառակի գննությամբ՝ դատական նիստում տեսադիտումով հաստատվել է ամբաստանյալի այն ցուցմունքը, որ քվեաթերթիկներն ինքը չէ համարել անվավեր, այլ հանձնաժողովը:

Ընդհանրացնելով վերոգրյալն ու հիմք ընդունելով ԱՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունն ու քրեական և քրեական դատավարական օրենքի մատնանշված իրավանորմերը, Դատարանն արձանագրում է, որ ապացույցների անբավարարությամբ պայմանավորված հանցագործության դեպքի բացակայության հիմքով պետք է ճանաչվի և հռչակվի Ջարդար Հակոբյանի անմեղությունն իրեն մեղսագրված հանրորեն վտանգավոր արարքում:

4. Վերաքննիչ դատարանը՝ բեկանելով Դատարանի արդարացման դատավճիռը, պատճառաբանել է, որ Դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, վերլուծելով ամբաստանյալ Ջարդար Հակոբյանին առաջադրված մեղադրանքը, նրա, վկաների ցուցմունքները, փորձագետի եզրակացությունն ու գործով ձեռք բերված մյուս ապացույցները, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ գտել է, որ ամբաստանյալ Ջ. Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, մեղսագրված արարքը կատարելն ապացուցված է, այն ճիշտ է որակված և համապատասխանում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներին և նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի և նրա նկատմամբ սահմանելով պատիժ՝ ազատազրկում 3 տարի ժամկետով, կիրառել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի

կապակցությամբ համաներում հայտարարելու մասին՝ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ ազատելով նշանակված պատժի կրումից:

Նույն որոշմամբ վերացվել է խափանման միջոցը:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

Վճռաբեկ բողոք բերած անձը՝ ԱՀ գլխավոր դատախազ Ա.Մոսիյանը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը Ջ.Հակոբյանին նշանակված պատժի կրումից ՏԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին՝ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ ազատելու մասով անհիմն է ու անօրինական և կայացվել է նյութական իրավունքի խախտմամբ:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը Ջ.Հակոբյանի նկատմամբ նշանակելով հիմնավորված պատժատեսակ և պատժաչափ ու քննարկելով նշանակված պատժը վերջինիս կողմից կրելու նպատակահարմարության հարցը, նպատակահարմար է գտել վերջինիս ազատել պատժի կրումից Համաներման որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ և այդ եզրահանգումը հիմնավորվել է նրանով, որ նշված որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված սահմանափակումներից, առաջինը տարածվում է արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտված անձանց վրա՝ սահմանված պատժաչափի չկրած մասով, իսկ երկրորդում՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածի վերաբերյալ նշում առկա չէ:

Շարադրելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի և 81-րդ հոդվածի բովանդակությունը, վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ Համաներման ակտում սահմանված է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև Համաներման ակտը սահմանում է, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից, պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից՝ լրիվ կամ մասնակիորեն: Համաներման ակտի կիրառման սահմանափակումները նախատեսված են Համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն ու այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը, կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառության:

ԼՂՀ Ազգային ժողովի «ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2016թ. օգոստոսի 25-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը սահմանում է՝

«1. Պատժից ազատել, բացառությամբ սույն որոշմամբ 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝

3. այն անձանց, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի»:

Բողոքի հեղինակի կարծիքով՝ Համաներման որոշման 1-ին կետում սահմանված բացառության ուժով և նույն որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետում ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածը ներառված լինելու

պարագայում, Վերաքննիչ դատարանը չպետք է կիրառեր Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետը: Համաներման հիմքով Ջ.Հակոբյանին պատժի կրումից ազատելու անհրաժեշտության վերաբերյալ եզրահանգում կատարելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում և չի պահպանել ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ և 81-րդ հոդվածների պահանջները, Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետը, որը չպետք է կիրառեր, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա, և արդյունքում Ջ.Հակոբյանը համաներման ակտի անհիմն կիրառման հիմքով ազատվել է պատժի կրումից:

Ըստ բողոքի հեղինակի՝ բողոքարկվող որոշմամբ արձանագրված ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը թույլ են տալիս հանգելու հետևության, որ Ջ. Հակոբյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժ կրելու, ուստի ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա Ջ.Հակոբյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները նման ակտի կայացման հնարավորություն են տալիս, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Գտնելով, որ Գերագույն դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 29-ի որոշումը՝ ամբաստանյալ Ջ.Հակոբյանին ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով 3/երեք/ տարի ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումից «ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին»՝ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառման հիմքով ազատելու մասով, և որոշումը՝ բեկանված մասով, փոփոխել ու վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնել:

Բողոք բերած անձ՝ Ջ.Հակոբյանի պաշտպան Ա.Ապրեսյանը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով դատարանի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված դատավճիռը և Ջ.Հակոբյանին մեղավոր ճանաչելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով, խախտել է Արցախի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի պահանջները, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքը, ԼՂՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 9-րդ, 18-րդ հոդվածների, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 116-րդ, 137-րդ, 372-րդ, 378-րդ, 384-րդ հոդվածների պահանջները ու չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերը և նույն հոդվածի 2-րդ մասը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը քննության առնելով և գնահատելով մեղսագրվող արարքը Ջ.Հակոբյանի կողմից կատարելու փաստի ապացուցվածության հարցը, հանգել է հետևության, որ տեսաձայնագրության մեջ երևացող անձանց գործողությունները տեսանելի են պարզ

ակնադիտական եղանակով և առիթ չեն տալիս պնդելու, որ դրանց գնահատական տալու համար անհրաժեշտ է հատուկ մասնագիտական գիտելիքներ, ու արձանագրել է, որ դատական նիստում հետազոտված իրեղեն ապացույց ճանաչված լազերային սկավառակում առկա տեսագրություններից հստակ դիտվում է, որ Ջարդար Հակոբյանը պատռում է քվեաթերթիկներից մեկը, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալում: Տեսագրության մեջ երևացող Ջ.Հակոբյանի գործողությունները, մասնավորապես՝ յուրաքանչյուր քվեաթերթիկ մանրագնահին տեսադիտարկման ենթարկելը, որևէ կասկած չեն թողնում այն մասին, որ Կ.Հակոբյանի օգտին քվեարկված քվեաթերթիկներում առկա կետերը նկատվել են ամբաստանյալի կողմից, սակայն դրանք անվավեր համարելու ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել, իսկ քվեաթերթիկներից մեկը մարված է համարվել արդեն քվեարկությունից հետո:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումներն ակնհայտ անհիմն են, ինչպես Դատարանում քրեական գործի դատաքննությամբ, այնպես էլ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Ջ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորող որևէ ապացույց ձեռք չի բերվել, առաջադրված մեղադրանքը ոչ միայն չի հիմնավորվել, այլև այն հերքվել է քրեական գործի քննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ, և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ դատական նիստում հետազոտված իրեղեն ապացույց ճանաչված լազերային սկավառակում առկա տեսագրությունից հստակ դիտվում է, որ Ջ.Հակոբյանը պատռում է քվեաթերթիկներից մեկը, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալում, տեսագրության մեջ երևացող Ջ.Հակոբյանի գործողությունները, մասնավորապես՝ յուրաքանչյուր քվեաթերթիկ մանրագնահին տեսադիտարկման ենթարկելը, որևէ կասկած չեն թողնում այն մասին, որ Կ.Հակոբյանի օգտին քվեարկված քվեաթերթիկներում առկա կետերը նկատվել են ամբաստանյալի կողմից, կրում են սուբյեկտիվ բնույթ, ոչ միայն չեն բխում քրեական գործով ձեռք բերված ապացույցներից, այլև ակնհայտ հակասում են դրանց, մասնավորապես՝ ամբաստանյալ Ջ. Հակոբյանի, վկաներ՝ Ալբերտ Տոնոյանի, Ժորիկ Մեսրոպյանի, Նազիկ Հակոբյանի, Լիլիթ Խաչատրյանի, Սեյրան Աղաջանյանի, Գնել Մաթևոսյանի, Արթուր Մնացականյանի, Տիգրան Պողոսյանի, Հակոբ Պողոսյանի, Գևորգ Պողոսյանի ցուցմունքներին, համալիր տեսաձայնագրային և հետքաբանական փորձաքննության ՀՄ16-0268Դ եզրակացությանը, տեսաձայնագրային փորձաքննության ՀՄ17-0398Դ եզրակացությանը:

Բողոքի հեղինակը՝ շարադրելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ և 17-րդ հոդվածների բովանդակությունը, փաստել է, որ քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ձեռնարկել նշված օրենսգրքով նախատեսված գործողությունները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, իսկ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերվող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Սույն քրեական գործով Ջարդար Հակոբյանը ժխտել է Տիգրան Պողոսյանի օգտին քվեարկած քվեաթերթիկներից մեկը ձեռքով պատռելու, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալելու հանգամանքը, նշելով, որ ինքը նման բաներ չի արել, այլ այդ քվեաթերթիկները քվեատուփից հանել է պատռված և ծալված վիճակում, իսկ պատռվածքը ձեռքով ցույց է տվել Տիգրան Ղազարյանի վստահված անձ Հակոբ Ղազարյանի պահանջով: Կարապետ Հակոբյանի օգտին քվեարկած որևէ քվեաթերթիկ կետի ձևով նշան չի պարունակել, անգամ եթե պարունակել է, ապա ինքը չի նկատել, իսկ նկատելու դեպքում կհայտարարեր նրանց անվավերության մասին:

Ջարդար Հակոբյանի կողմից տրված ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջինս հանդիսանում է քրեադատավարական այն սուբյեկտը, ում օրենսդրորեն հնարավորություն է տրվում հանդես չգալ ցուցմունքով կամ տալ իր համար բարենպաստ ցուցմունք և այս դեպքում է, որ մեղադրանքի մարմինները պարտավոր են ի հակադրումն ամբաստանյալի հայտնած տեղեկությունների՝ դատարանին ներկայացնել ապացույցների այնպիսի բավարար զանգված, որն անհերքելիորեն կվկայի վերջինիս կողմից տրված ցուցմունքների անարժանահավատ, մտացածին կամ սուտ լինելու մասին, ինչը սույն քրեական գործով տեղի չի ունեցել, բայց այդ հանգամանքը չի խանգարել Վերաքննիչ դատարանին, առանց Ջ.Հակոբյանի մեղքը հիմնավորող ապացույցների, նրա նկատմամբ կայացնել մեղադրական դատական ակտ:

Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Բողոքաբերը գտնում է, որ Ջարդար Հակոբյանին առաջադրված մեղադրանքն անհիմն է, իսկ դատաքննության ժամանակ ձեռք բերված ապացույցները բավարար չեն Ջարդար Հակոբյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար: Ուստի, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ սխալ է կիրառել քրեական և քրեադատավարական օրենքները, ինչը ծանր հետևանք է առաջացրել Ջարդար Հակոբյանի համար, որն էլ, համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների, վճռաբեկ բողոք բերելու հիմք է հանդիսանում:

Բողոք բերող անձը խնդրել է բեկանել Ջ.Հակոբյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 29-ի որոշումը և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ Դատարանի 2017թ. հոկտեմբերի 23-ի դատավճիռին:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը Գերագույն դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնություն իրացումն է: Ուստի, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ ներքոնշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Սույն գործով Գերագույն դատարանի առջև բարձրացված իրավական հարցերն հետևյալն են. առաջին՝ հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունը ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ ամբաստանյալ Ջ.Հակոբյանի մեղքն ապացուցված լինելու մասին և հիմնված է արդյոք այն գործին վերաբերող հավաստի ապացույցների բավարար ամբողջության վրա: Երկրորդ Վերաքննիչ դատարանն հիմնավոր է ամբաստանյալ Ջ.Հակոբյանի նկատմամբ կիրառել «ԼՂՀ հոչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2016թ. օգոստոսի 25-ի որոշումը և նրան ազատել պատժից, և երրորդ՝ Ջ.Հակոբյանի նկատմամբ հնարավոր է արդյոք պատիժը պայմանականորեն չկիրառել: Գերագույն դատարանը արձանագրում է, որ վերոնշյալ հարցերից երկրորդին և երրորդին հնարավոր է անդրադառնալ միայն առաջին հարցին պատասխանելուց հետո, ուստի Գերագույն դատարանը քննության է առնում սույն գործով բողոքաբեր Ա.Ապրեսյանի կողմից բարձրացված առաջին հարցը:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Ֆթեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Նույն օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելու կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, քվեատուփի հափշտակելու, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելու կամ մուտքագրված տվյալները փոփոխելու, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

Տվյալ հանցագործության անմիջական օբյեկտն ընտրությունների և հանրաքվեի անցկացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կամ ԱՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը:

Հանցագործության առարկան ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքներ պարունակող փաստաթղթերն են /քվեաթերթիկները, ընտրողների գրանցման ցուցակները, քվեարկության ամփոփիչ և անճշտությունների վերաբերյալ արձանագրությունները/, որոնց ձևն ու լրացման կարգը սահմանվում են օրենքով, ինչպես նաև քվեատուփն ու համապատասխան համակարգչային տեղեկատվությունը:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքները կեղծելով, որը կարող է դրսևորվել հետևյալ գործողություններով՝

1. ձայներն ակնհայտ սխալ հաշվելով.

2. ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելով.

3. քվեատուփ հափշտակելով.

4. համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելով կամ մուտքագրված տվյալները փոփոխելով.

5. որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելով.

6. ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելով:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները որևէ եղանակով կեղծելու պահից:

Սուբյեկտիվ կողմից քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար, ակնհայտորեն կեղծի հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ տեղամասային, ընտրատարածքային կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձ, ով այս կամ այն եղանակով կեղծել է հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ջ.Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով այն բանի համար, որ նա, հանդիսանալով Քաշաթաղի շրջանի Ղազարապատ համայնքի թիվ 27-րդ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և օժտված լինելով քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ քվեաթերթիկները վավեր կամ անվավեր հայտարարելու իրավասությամբ, նույն համայնքում 2015 թվականի սեպտեմբերի 13-ին կայացած համայնքի ղեկավարի ընտրության քվեարկությունն ավարտելուց և քվեատուփը բացելուց հետո, գրանցված երկու թեկնածուների օգտին քվեարկած ձայները հաշվելու ժամանակ, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, անձնական շահագրգռվածությունից ելնելով, համայնքի ղեկավարի թեկնածուներից մեկի՝ իր հարազատ եղբոր՝ Կարապետ Տելուշի Հակոբյանի օգտին բավարար ձայներ գրանցելու և համայնքի ղեկավար ընտրվելու նպատակով, մյուս թեկնածու՝ Տիգրան Սերգեյի Պողոսյանի օգտին քվեարկած թվով երկու հատ

քվեաթերթիկներից մեկը դիտավորությամբ ձեռքով պատռել է, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալել և դրանք հայտարարել որպես անվավեր քվեաթերթիկներ: Այնուհետև, Տիգրան Մերգեյի Պողոսյանի օգտին քվեարկած թվով երկու քվեաթերթիկների հակառակ կողմում՝ հետևի մասում, հանձնաժողովի անդամների ստորագրության մոտ առկա կետերը հիմք ընդունելով, դրանք հայտարարել է որպես անվավեր և տեղադրել անվավեր քվեաթերթիկների փաթեթում, իսկ երբոր օգտին քվեարկած թվով չորս հատ քվեաթերթիկների առաջնային մասերում քվեարկության համար նախատեսված վանդակներում առկա կետերն անտեսելով, դրանք համարել է վավեր և տեղադրել Կ. Հակոբյանի օգտին վավեր ճանաչված քվեաթերթիկների փաթեթում:

Բացի այդ, Կարապետ Տելուշի Հակոբյանի օգտին քվեարկած մեկ հատ քվեաթերթիկի վրա սահմանված ձևին չնմանվող նշման առկայության դեպքում, այն անվավեր հայտարարելու փոխարեն, տեղադրել է չօգտագործված և մարված քվեաթերթիկների փաթեթում:

Նշված գործողությունները նախաքննության մարմնի կողմից գնահատվել են որպես քվեների կեղծում և ակնհայտ սխալ հաշվում, որոնց արդյունքում կեղծվել են համայնքի ղեկավարի ընտրության արդյունքները, դրանք գրանցվել համապատասխան արձանագրությունում և հաստատվելով՝ ներկայացվել Քաջաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովին:

Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Ջարդար Հակոբյանն իրեն մեղավոր չի ճանաչել:

Դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, այն հիմնավորելով հետևյալ կերպ, Տիգրան Մերգեյի եզրակացություններով չի հաստատվել և դատական նիստում չի ապացուցվել ամբաստանյալ Ջարդար Հակոբյանի կողմից թեկնածու Տիգրան Մերգեյի Պողոսյանի օգտին քվեարկած թվով երկու հատ քվեաթերթիկներից մեկը դիտավորությամբ ձեռքով պատռելու, իսկ մյուսը՝ անկյունային մասից ծալելու և դրանք որպես անվավեր քվեաթերթիկներ հայտարարելու հանգամանքը: ...Ջարդար Հակոբյանի գործողությունները պատկերող լազերային սկավառակը, որի հիման վրա առավելապես կառուցված է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը, դատարանի մոտ խիստ կասկած է հարուցում, ավելին, Դատարանը գտնում է, որ դա արժանահավատ չէ...: ...Դատարանն արձանագրում է, որ հենց գործով իրեղեն ապացույց ճանաչված, ընտրության արդյունքների ամփոփման և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ գործով ամբաստանյալ Ջարդար Հակոբյանի գործողությունները պատկերող լազերային սկավառակի գնությամբ՝ դատական նիստում տեսադիտումով հաստատվել է ամբաստանյալի այն ցուցմունքը, որ քվեաթերթիկներն ինքը չի համարել անվավեր, այլ՝ հանձնաժողովը:

Ընդհանրացնելով վերոգրյալն ու հիմք ընդունելով ԱՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունն ու քրեական և քրեական դատավարական օրենքի մատնանշված իրավանորմերը, Դատարանն արձանագրում է, որ ապացույցների անբավարարությամբ պայմանավորված հանցագործության դեպքի բացակայության հիմքով պետք է ճանաչվի և հռչակվի Ջ.Հակոբյանի անմեղությունն իրեն մեղսագրված հանրորեն վտանգավոր արարքում:»

Վերաքննիչ դատարանը՝ բեկանելով Դատարանի արդարացման դատավճիռը, պատճառաբանել է, որ Դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, վերլուծելով ամբաստանյալ Ջարդար Հակոբյանին առաջադրված մեղադրանքը, նրա, վկաների ցուցմունքները, փորձագետի եզրակացությունն ու գործով ձեռք բերված մյուս ապացույցները, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ գտել է, որ ամբաստանյալ Ջ.Հակոբյանի կողմից, նրա մեղավորությամբ, մեղսագրված արարքը կատարելն ապացուցված է, այն ճիշտ է որակված և համապատասխանում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներին և նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի և նրա նկատմամբ սահմանելով պատիժ՝ ազատազրկում 3 տարի ժամկետով, կիրառել է ՏԼԵՌՆԱյին Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաձայնում հայտարարելու մասին» Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ ազատելով նշանակված պատժի կրումից:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Ջ.Հակոբյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության և սահմանել է կատարած արարքին համաչափ պատիժ:

Գերագույն դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ջ.Հակոբյանի մեղքը մեղսագրված արարքում հաստատված է, իսկ բողոքաբեր Ա.Ապրեսյանի պատճառաբանությունները հերքված են դատաքննությամբ հետազոտված ներքնհիշյալ բավարար ապացույցներով:

-Իրեդեն ապացույց ճանաչված «PRINCO» ընկերության արտադրած, DVD-R ֆորմատի 4.7GB ծավալով լազերային սկավառակով, որի գնության արձանագրությամբ և դրա գնությամբ՝ դատական նիստում տեսադիտումով հաստատված է, թե ինչպես է հանձնաժողովի նախագահ Ջ.Հակոբյանը պատռում, ծալում քվեաթերթիկները /իրեդեն ապացույց ճանաչված սկավառակի տեսաձայնագրություն՝ SAM-1579 ընդ 19:07-19:30 և SAM -1580 ընդ 00:05-00:22/: Մինչդեռ, Դատարանը հանգել էր այլ հետևության, որը չի համապատասխանում Դատարանում հետազոտված ապացույցին:

-Փորձագետի թիվ 52531506 առ 01.03.2016թ. տեսաձայնային և համակարգչատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությամբ, որի համաձայն՝ փորձաքննության ներկայացված «ՏPRINCO» ընկերության արտադրած, DVD-R ֆորմատի լազերային սկավառակը պարունակում է «SAM-1579» «SAM-1580» «SAM-1581» անվանումներով տեսաֆայլեր /տեսաձայնագրություններ/, որոնք նկարահանվել են փորձաքննությանը ներկայացված «SAMSUNG» ընկերության արտադրության, WB150F տեսակի թվային տեսախցիկի միջոցով: Հետազոտելի «SAM-1579» և «SAM-1580»

անվանումներով տեսաձայնագրություններում խմբագրման /մոնտաժման/ հետքեր չեն հայտնաբերվել:

-Ղազարապատ համայնքի ղեկավարի ընտրության քվեարկության արդյունքների փաստաթղթերով և իրեղեն ապացույցներով, որոնց գնությունից դիտվում է, որ Ս.Պետրոսյանի օգտին քվեարկած և անվավեր հայտարարած փաթեթում առկա հինգ հատ քվեաթերթիկներից մեկը աջ մասից ունի պատռվածք՝ 0,6սմ. չափով, մյուս քվեաթերթիկը ձախ անկյունային մասից ունի 1,8x3սմ. չափով ծավաճք, երկու հատ քվեաթերթիկները՝ հանձնաժողովի անդամների ստորագրության մոտ, ունեն կետեր: Կ.Հակոբյանի օգտին քվեարկած և վավեր ճանաչված փաթեթում առկա տասնչորս քվեաթերթիկներից չորս հատ քվեաթերթիկների առաջնային մասերում քվեարկության համար նախատեսված վանդակներում առկա են կետեր:

-Ղազարապատ համայնքի ղեկավարի ընտրության քվեարկության արդյունքների 13.09.2015թ. արձանագրությամբ, որի համաձայն՝ հանձնաժողովին հատկացվել է 26 հատ քվեաթերթիկ: Համայնքում հիմնական ցուցակով ընտրողների թիվը կազմել է 33 հոգի: Ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 34 հոգի, որից մեկը մասնակցել է լրացուցիչ ցուցակով: Քվեարկությանը մասնակցել են 29 ընտրող: Կ.Հակոբյանի օգտին քվեարկել են 14 ընտրող, Ս.Պողոսյանի օգտին՝ 10 ընտրող: Հինգ քվեաթերթիկներ հայտարարվել են որպես անվավեր, յոթը՝ մարված: Նույնը արձանագրված է նաև թիվ 27 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

-Քաջաթաղի շրջանի Ղազարապատ համայնքի թիվ 27 տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստի 17.08.2015թ. թիվ 1 արձանագրությամբ, համաձայն որի՝ հանձնաժողովի անդամ Զարդար Տելուշի Հակոբյանն ընտրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ջ.Հակոբյանի կատարած հանցանքն ապացուցված է, նրա մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, ուստի այդ առումով Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբեր Ա.Ապրեսյանի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար հիմք չեն կարող հանդիսանալ վերջինիս բողոքը բավարարելու համար:

Անդրադառնալով երկրորդ հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Համաներումը օրենսդիր մարմնի կողմից ընդունվող ակտ է /որոշում/, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը,

որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառության:

«ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին՝ ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը նախատեսում է «Պատժից ազատել, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝ այն անձանց, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ»:

Մեջբերված դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենսդիր մարմինը նախատեսել է պատժից ազատել առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված այն անձանց, որոնք հանցանքը կատարել են մինչև 2016թ. օգոստոսի 1-ը ներառյալ, սակայն այդ ընդհանուր կանոնից նախատեսել է սահմանափակումներ այն անձանց համար, որոնք կատարել են որոշակի հողվածներով նախատեսված հանցագործություններ, դրանց թվում է նաև ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածը, որով դատապարտվել է ամբաստանյալ Ջ.Տ. Հակոբյանը, քանի որ նշված հոդվածով դատապարտված անձանց համար Համաներման ակտի 8-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսել է միայն դատական ակտով սահմանված պատժաչափի չկրած մասի կրճատում 6 ամսով, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը ամբաստանյալի նկատմամբ Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ պատժից ազատելու մասով անհիմն է, ուստի ԱՀ գլխավոր դատախազ Ա. Մոսիյանի վճռաբեկ բողոքը այդ մասով հիմնավոր է ու ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ մասնակիորեն բեկանման:

Ինչ վերաբերում է ԱՀ գլխավոր դատախազ Ա. Մոսիյանի վճռաբեկ բողոքում առկա ամբաստանյալ Ջ.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջնորդությանը, ապա Գերագույն դատարանը, քննարկելով սույն որոշման մեջ բարձրացված 3-րդ հարցը, փաստում է, որ համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատավճիռ կայացնելիս դատարանը նախատեսված հերթականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

6. ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7. ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8. ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենից ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի

պատժի ենթակա լինելու հարցը, այսուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում՝ ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, թե ոչ՝ հաշվի առնելով նշանակված պատիժն առանց փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության հանգամանքը, ինչպիսի հարցեր ստորադաս դատարանները չեն քննարկել:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, որոշելով ամբաստանյալի պատժի ենթակա լինելու հարցը և սահմանելով պատիժ՝ ազատազրկում երեք տարի ժամկետով, նրա նկատմամբ անհիմն կիրառել է Համաներման ակտը և ազատել պատժից, ուստի և չի քննարկել նշանակված պատիժն առանց փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորությունը, իսկ դրա քննարկված ու գնահատված չլինելու պարագայում բացառվում է Գերագույն դատարանի կողմից այդ հարցի քննարկումը, ուստի գործը այդ մասով ենթակա է ուղարկելու Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտի մասնակիորեն բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ջ.Հակոբյանի նկատմամբ Համաներմում կիրառելով, թույլ է տվել առերևույթ դատական սխալ, որի արդյունքում Ջ.Հակոբյանն անհիմն ազատվել է պատժից, իսկ ընտրված խափանման միջոցը՝ վերացվել է, ինչը ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի իմաստով հանգեցրել է քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառման և նույն օրենսգրքի 370-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված դատական ակտի կայացման, ուստի ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով՝ այն ենթակա է մասնակիորեն բեկանման, իսկ ԱՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը՝ մասնակիորեն բավարարման:

Գերագույն դատարանը արձանագրում է, որ խափանման միջոցի վերացումը բեկանելուց հետո նախկինում ընտրված խափանման միջոցը մնում է ուժի մեջ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ, 435-436-րդ, 438-440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԱՀ գլխավոր դատախազ Ա.Մոսիյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ջարդար Տելուշի Հակոբյանի վերաբերյալ ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով քրեական գործով Վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 29-ի որոշումը մասնակիորեն՝ համաներման ակտի կիրառման և խափանման միջոցը վերացնելու մասով, բեկանել և այդ մասով գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Ամբաստանյալ Ջարդար Տելուշի Հակոբյանի պաշտպան Ա.Ապրեսյանի վճռաբեկ բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ստորագրությունը Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ստորագրությունը Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ստորագրությունը Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
ստորագրությունը Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ստորագրությունը Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Է.Ավանեայանից հոգուտ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի բռնագանձվել է 2.155.024,08 ՀՀ դրամ, որից՝ 1.941.405,95 ՀՀ դրամը՝ որպես փոխառության գումար, 118.594,28 ՀՀ դրամը՝ որպես հաշվեգրված տոկոսներ, 65.289,92 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց փոխառության գումարի նկատմամբ հաշվարկված տույժ, 2.733,93 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց տոկոսի նկատմամբ հաշվարկված տույժ:

Է.Ավանեայանից հոգուտ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի բռնագանձվել է 2015թ. դեկտեմբերի 3-ին կնքված թիվ PN 25/15 փոխառության պայմանագրի 1.2 կետով հաշվարկվող տոկոսները և 3.2 ու 3.3 կետերով հաշվարկվող տույժերը՝ սկսած 2017թ. օգոստոսի 10-ից մինչև պարտավորության դադարման օրը:

Պատասխանողներին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող ԱՀ Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում գտնվող՝ 166,21 քառ.մետր մակերեսով բնակելի տան, 23,40 քառ.մետր օժանդակ շինության, 0,40 քառ.մետր մակերեսով գոմի և 0,11 հա մակերեսով հողամասի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասով հայցը մերժվել է:

Հայցվորի վերաքննիչ բողոքի հիմքերում վերանայելով Առաջին ատյանի դատարանի վճիռը, ԱՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2018թ. հունվարի 22-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ Առաջին ատյանի դատարանի 2017թ. հոկտեմբերի 19-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն Ա.Բախշիյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս սխալ է մեկնաբանել օրենքը և թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոք բերողը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հայտնած դիրքորոշումը չի համապատասխանում ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ, 430-րդ, 885-րդ, 876-րդ հոդվածներին: Նշված պնդումը բողոք բերող անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը պնդում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և 885-րդ հոդվածի մեկնաբանությունից հստակ երևում է, որ եթե պարտավորությունը նորացվում է փոխառության պարտավորությամբ, ապա պետք է պահպանվի փոխառության պայմանագրի համար նախատեսված գրավոր ձևը: Այդ պարագայում անհրաժեշտ է պարզել, թե ովքեր են հանդիսանում պայմանագրի կողմերը: Վկայակոչելով նույն օրենսգրքի 876-րդ հոդվածը, բողոքաբերը նշում է, որ փոխառության պայմանագրի կողմերն են հանդիսանում փոխատուն և փոխառուն, որոնց միջև էլ համաձայնեցվում են պայմանագրի պայմանները, իսկ նորացման դեպքում՝ նաև լրացուցիչ պարտավորությունների պահպանման վերաբերյալ պայմանները:

Ըստ բողոք բերողի՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածը որևէ կերպ չի կարգավորում՝ արդյո՞ք պարտավորության նորացման դեպքում կողմերի համաձայնությամբ կարող են պահպանվել ապահովման միջոց հանդիսացող լրացուցիչ պարտավորությունները, ինչը թույլ է տալիս եզրահանգել, որ խոսքը վերաբերում է բոլոր լրացուցիչ պարտավորություններին: Այլ կերպ ասած՝ պարտավորությունների նորացմանը վերաբերող նորմերով որևէ կերպ չի սահմանվում, որ նորացման դեպքում լրացուցիչ պարտավորություն հանդիսացող գրավի իրավունքը պահպանելու համար անհրաժեշտ է գրավատուի լրացուցիչ համաձայնությունը:

Գրավը կարգավորող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն գրավով ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելիս, գրավը դադարում է, եթե գրավատուն պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրելու նոր պարտապանի փոխարեն: Այսինքն, գրավով ապահովված պարտավորության կողմերի փոփոխությունը կամ նշված պարտավորության նորացումը գրավատուի համաձայնության անհրաժեշտության մասին չի նշում:

Ինչ վերաբերում է փոխառության պայմանագրի նոտարական վավերացմանը և դրանից բխող գրավի իրավունքի պետական գրանցման անհրաժեշտությանը, ապա բողոքաբերը շեշտել է, որ Հայցվորի գրավի իրավունքն արդեն իսկ գրանցված էր, իսկ լրացուցիչ պարտավորության պահպանման վերաբերյալ համաձայնության ձևին ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքը պահանջ չի նախատեսում:

Ըստ էության, բողոքի հեղինակն իր բողոքում բարձրացրել է հետևյալ հարցերը՝ 1/արդյո՞ք պարտավորությունը նորացնելիս պահանջվում է պարտավորության ապահովման համար գրավադրված գույքի սեփականատիրոջ համաձայնությունը և 2/արդյո՞ք պարտավորության նորացման դեպքում պահանջվում է սկզբնական պարտավորության ապահովման համար գրավադրված գույքի նկատմամբ գրավի իրավունքի վերագրանցում:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2018թ. հունվարի 22-ի որոշումը և այն փոփոխել՝ ամբողջությամբ բավարարելով հայցը՝ անդրադառնալով նաև դատական ծախսերի հարցին:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ըստ «Արցախբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ նաև Բանկ/ և Էրիկ Էդվարդի Ավանեսյանի միջև 2011թ. մարտի 28-ին կնքված թիվ 281 վարկային պայմանագրի՝ Բանկը Է.Ավանեսյանին տրամադրել է տարեկան 16% տոկոսադրույքով 7.300 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ՝ մինչև 2016թ. մարտի 28-ը մարման ժամկետով /հիմնական պարտավորություն/: ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը իրականացնում է տոկոսների մի մասի՝ տարեկան 9 տոկոսային կետի չափով սուբսիդավորում:

2. Ըստ Բանկի և Էրիկ Էդվարդի Ավանեսյանի, Էդվարդ Անդրանիկի Ավանեսյանի, Զինա Արտեմի Ավանեսյանի և Էդիտա Էդվարդի Ավանեսյանի /այսուհետ՝ նաև Գրավատուներ/ միջև 2011թ. մարտի 28-ին կնքված թիվ 281 հիփոթեքի պայմանագրի /այսուհետ՝ նաև Գրավի պայմանագիր/ հիմնական

պարտավորության կատարումը ապահովելու նպատակով Գրավատուները գրավ են դրել ընդհանուր սեփականության իրավունքով իրենց պատկանող ԱՀ Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում գտնվող՝ 166,21 քառ.մետր մակերեսով բնակելի տունը, 23,40 քառ.մետր օժանդակ շինությունը, 0,40 քառ.մետր մակերեսով գոմը և 0.11 հա մակերեսով հողամասը /այսուհետ՝ նաև Գրավի առարկա/:

Նշված պայմանագիրը ստորագրված է բոլոր Պատասխանողների կողմից:

3. Ըստ թիվ 281 վարկային պայմանագրի 1.2 և թիվ 281 հիփոթեքի պայմանագրի 1.1 կետերի՝ Է.Ավանեսյանի կողմից ստանձնվելիք պարտավորությունների չկատարման համար Բանկի և ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջև կկնքվի պահանջի զիջման /ցեսիայի/ պայմանագիր:

4. Բանկի և ԱՀ գյուղի և գյուղատնտեսության հիմնադրամի միջև 2015թ. հոկտեմբերի 30-ին կնքվել է վարկային և գրավի պայմանագրերից ծագած /բխող/ իրավունքները /պահանջը/ փոխանցելու /զիջելու/ մասին պայմանագիր, որով Բանկը փոխանցում /զիջում/, իսկ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամն ընդունում է Բանկի և Է.Ավանեսյանի միջև 2011թ. մարտի 28-ին կնքված թիվ 281 պայմանագրի հիման վրա Բանկին պատկանող պահանջի իրավունքը լրիվ ծավալով և վարկային պայմանագրով սահմանված պայմաններով:

5. Թիվ 015471 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն Գրավի առարկայի նկատմամբ գրանցվել է ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի իրավունքը:

6. ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի և Է.Ավանեսյանի միջև 2015թ. դեկտեմբերի 3-ին կնքվել է թիվ PN 25/15 պայմանագիրը, որի համաձայն 2015թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ վերջինիս պարտքը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ՝ տարեկան 6% տոկոսադրույքով, 2 տարի ժամկետով, ապահովվածությունը՝ 2015թ. հոկտեմբերի 30-ին կնքված վարկային պայմանագրից բխող իրավունքները /պահանջը/ զիջելու /ցեսիա/ մասին պայմանագրի համաձայն Գրավի առարկա հանդիսացող գույքը:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը պայմանավորված է բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու և դատական սխալի առկայության հանգամանքներով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է Գրավի առարկայի վրա բռնագանձումը տարածելու պահանջը մերժելու մասով:

Պարզելու համար, թե, արդյո՞ք, վճռաբեկ բողոքի հիմքերը բավարար են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու կամ փոփոխելու համար, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ տվյալ վեճին վերաբերող, ինչպես նաև բողոքարկված որոշման մեջ և վճռաբեկ բողոքում վկայակոչած իրավական նորմերին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով վեճի լուծման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ նորացմամբ պարտավորության դադարելը սահմանող 430-րդ, գրավի պայմանագիրն ու ձևը սահմանող 234-րդ, գրավի իրավունքի ծագումը սահմանող 235-րդ հոդվածների սխալ կիրառման հետևանքով թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի էլքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը:

Սույն գործի նյութերից հստակ երևում է, որ ինչպես Բանկի և Էրիկ Էդվարդի Ավանեսյանի միջև 2011թ. մարտի 28-ին կնքված թիվ 281 վարկային պայմանագրով, այնպես էլ Բանկի և Գրավատուների միջև 2011թ. մարտի 28-ին կնքված թիվ 281 հիփոթեքի պայմանագրով նախատեսվել են նշված կողմերի միջև պարտավորությունները՝ պայմանագրի առարկայի, ժամկետի, ինչպես նաև Է.Ավանեսյանի կողմից պարտավորության չկատարման համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ: Ավելին՝ թիվ 281 վարկային պայմանագրի 1.2 և թիվ 281 հիփոթեքի պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ Է.Ավանեսյանի կողմից ստանձնվելիք պարտավորությունների չկատարման համար Բանկի և ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջև կկնքվի պահանջի զիջման /ցեսիայի/ պայմանագիր: Ինչպես երևում է գործի նյութերից, վարկային պայմանագրի կողմերը՝ Բանկը և Է.Ավանեսյանը, իսկ Գրավի պայմանագրի կողմերը՝ Գրավատուները, ստորագրել են պայմանագրերը՝ նշված պայմաններով:

Վերոգրյալից պարզ հետևում է, որ վարկային և հիփոթեքի, ինչպես նաև փոխառության պայմանագրով նախատեսված պայմանների, պարտավորության ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում պատասխանատվության և այլ հարցերը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթների վերլուծության և գնահատման արդյունքում:

Կողմերը ստորագրել են նշված պայմանագրերը և չեն առարկել պայմանագրի ոչ մի պայմանի վերաբերյալ, այսինքն ընդունել են նաև պայմանագրով նախատեսված իրենց համար բացասական հետևանքների վրա հասնելու հնարավորությունը՝ պարտավորության ոչ պատշաճ կատարման համար: Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում

դատաքննության ընթացքում Պատասխանողները չեն վիճարկել գրավի մասին պայմանագրում առկա իրենց համաձայնությունը և փոխառության պայմանագրի կնքման ընթացքում իրենցից կրկին գրավոր համաձայնություն չպահանջելու հանգամանքը:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով և օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի վճիռը, անտեսել է քաղաքացիական օրենսգրքի մի շարք պայմաններ, այն է՝ Առաջին ատյանի դատարանն իր վճռում նշել է՝ «ինչ կվերաբերի Փոխառության պայմանագրում տեղ գտած՝ «3/ ապահովվածությունը՝ 30.10.2015թ. կնքված վարկային պայմանագրից բխող /ծագած/ իրավունքները /պահանջը/ զիջելու /ցեսիա/ մասին պայմանագրի համաձայն ԱՀ Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում գտնվող՝ 166.21 քառ. մետր մակերեսով բնակելի տան, 23.40 քառ. մետր օժանդակ շինության, 0.40 քառ. մետր մակերեսով գոմի և 0.11 հա մակերեսով հողամասի նկատմամբ գրավի իրավունքը» ձևակերպմանը, ապա Դատարանը հիմք ընդունելով վերը հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ այն չի կարող էղվարդ Անդրանիկի Ավանեսյանի, Զինա Արտեմի Ավանեսյանի և Էդիտա Էղվարդի Ավանեսյանի կամքը արտահայտող պատշաճ համաձայնություն համարվել»:

Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 234-րդ հոդվածի 3-րդ մասը և 235-րդ հոդվածի 1-ին մասը, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Հայցվորի պահանջն այդ մասով ենթակա է մերժման:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով այդ պատճառաբանությունը, նշված վճիռը թողել է օրինական ուժի մեջ, հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածը, մասնավորապես նույն հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ /նորացում/:

Գերագույն դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է նշված հոդվածի իրավական վերլուծությանը և հայտնել իր դիրքորոշումը նովացիայի ինստիտուտի վերաբերյալ /տես՝ ԸԲԴ 2457/02/16 քաղաքացիական գործն ըստ հայցի ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ընդդեմ Ռնիկ Ներսեսի Հայրապետյանի/, ուստի սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում վերահաստատել այն:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածը սահմանում է «նորացում» հասկացության իրավական բնորոշումը, որը դիտարկում է որպես պարտավորության դադարման հիմքերից մեկը: Նորացման ժամանակ պարտավորության սուբյեկտների կազմը պահպանվում է, սակայն սկզբնական պարտավորությունը դադարում է և դրա տեղը ձևավորվում է նոր պարտավորություն:

Նորացումը ենթադրում է, որ պարտավորությունը, որով փոխարինվում է հինը, պետք է ունենա այլ առարկա կամ առարկան կարող է չտարբերվել

սկզբնական պարտավորության առարկայից, սակայն փոփոխվի դրա կատարման եղանակը, և ոչ թե սուբյեկտների շրջանակը:

Մինչդեռ սույն պարտավորության մեջ պարտապան Է.Ավանեսյանի կողմից պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման հետևանքով տեղի է ունեցել կողմերի /պարտատիրոջ/ փոփոխություն պահանջի զիջման /ցեսիայի/ միջոցով՝ վարկային և հիփոթեքի պայմանագրերին համաձայն:

Գերագույն դատարանը փաստում է, որ 2015թ. դեկտեմբերի 3-ին կնքած թիվ PN 25/15 պայմանագրի կողմերն են՝ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը և Է.Ավանեսյանը: Այսինքն՝ այս պայմանագրի կողմերն ուրիշ են, քանի որ տեղի է ունեցել պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխություն՝ պահանջի զիջման /ցեսիայի/ կանոններով: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի կարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով պարտավորության դադարեցումը /նովացիա/, պարզ է դառնում, որ պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև այլ պարտավորությամբ փոխարինելով, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից, այսինքն՝ նշված նորմը սույն գործով կիրառելի չէ: Միաժամանակ, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասը հստակ կարգավորում է նշված հարաբերությունները, սահմանելով, որ պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը /պահանջը/ կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով /պահանջի զիջում/: Նույն օրենսգրքի 399-րդ հոդվածի համաձայն՝ սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ տոկոսները: Գերագույն դատարանն արձանագրում է, որ թիվ 281 հիփոթեքի պայմանագիրը կնքվել է որպես թիվ 281 վարկային պայմանագրի ապահովվածություն: Այսինքն, ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի և Բանկի միջև կնքված «Վարկային և գրավի պայմանագրերից ծագած /բխող/ իրավունքները /պահանջը փոխանցելու /զիջելու/ մասին պայմանագրով» հիմնադրամին են փոխանցվում ինչպես հիմնական պարտավորությունը, այնպես էլ դրա ապահովվածությունը հանդիսացող լրացուցիչ պարտավորությունը՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 399-րդ հոդվածի կարգավորումների համաձայն:

Գերագույն դատարանը, հիմք ընդունելով վերը շարադրվածը, շեշտում է, որ սույն գործով նորացմամբ պարտավորությունների դադարման վերաբերյալ նորմերը կիրառման ենթակա չեն, ուստի Վերաքննիչ դատարանն այդ մասով թույլ է տվել էական դատական սխալ, ինչը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքը համարում է հիմնավոր և բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար, իսկ բեկանված մասով հայցը ենթակա է բավարարման՝ բռնագանձումը տարածելով Էրիկ Էդվարդի, Էդվարդ Անդրանիկի, Զինա Արտեմի և Էդիտա Էդվարդի Ավանեսյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 2011թ. մարտի 28-ի թիվ 281 պայմանագրով նշված անշարժ գույքի վրա:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ գործի նյութերը թույլ են տալիս կայացնելու որոշում՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը փաստում է.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններով:

Սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքից:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Էրիկ Էդվարդի Ավանեսյանից հօգուտ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի անհրաժեշտ է բռնագանձել 30.000 ՀՀ դրամ, որից 10.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամը՝ որպես վճռաբեկ բողոքի համար մուծած պետական տուրքի գումարներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը՝ բռնագանձումը գրավադրված անշարժ գույքի վրա չտարածելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասին ԱՀ վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունվարի 22-ի որոշումը բեկանել և փոփոխել. հայցը բավարարել բռնագանձումը տարածելով Էրիկ Էդվարդի, Էդվարդ Անդրանիկի, Զինա Արտեմի և Էդիտա Էդվարդի Ավանեսյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, 2011 թվականի մարտի 28-ի թիվ 281 պայմանագրում նշված անշարժ գույքի վրա: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Էրիկ Էդվարդի Ավանեսյանից հօգուտ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ, որից 10.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամը՝ որպես վճռաբեկ բողոքի համար մուծած պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

| | | |
|--------------------|-------------------------------|----------------------|
| ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ | <u>ստորագրությունը</u> | Ն.ՆԱԲԻՄԱՆՅԱՆ |
| ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ | <u>ստորագրությունը</u> | Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ |
| | <u>ստորագրությունը</u> | Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ |
| | <u>ստորագրությունը</u> | Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| | <u>ստորագրությունը</u> | Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ |

